

**ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎՈԼԵՅՈՒԻ ԳԱՎԱՔ 2024» ՄՐՑԱՇԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ**

20.01.2024 16:52



Տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի կողմից կազմակերպված «**Փաստաբանների վոլեյբոլի գավաթ 2024**» վոլեյբոլի մրցաշարի առաջին փուլը:

Մրցախաղում հանդես էին գալիս փաստաբանների կողմից ձևավորված «**Փաստաբանական ակադեմիա**», «**Արցախ**», «**Շուշի**», «**Հանրային պաշտպանի գրասենյակ**» և «**Լեգիտիմ**» թիմերը:

Ամփոփելով առաջին փուլի արդյունքները՝ պարզ դարձավ, որ եզրափակիչ փուլում մրցախաղը կշարունակեն «**Փաստաբանական ակադեմիա**» և «**Շուշի**» թիմերը:

Հունվարի 28-ին՝ ժամը 12:00-ին, տեղի ունենա եզրափակիչ փուլը, որտեղ հաղթանակի հավակնող թիմերն առավել հետաքրքիր և տպավորիչ խաղով հանդես կգան՝ հաղթական գավաթը նվաճելու ձգտումներով:









Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })